

# Ո Ս Կ Ե Չ Ո Յ Լ Լ Ե Չ Ո Ւ Ն

Հայերէն բարբառ, օտար երկնքին տակ լսուած՝ երաժշտութեանց  
քաղցրագոյնն ես դուն:

Սրտեր կը տրոփեն, երակներ՝ աղու քնարի արեան թելեր՝ կը  
վառին լուսեղ տենչի մը երանգով:

Զօղ մ'ես իւղաթուրմ եւ անուշարոյր, միաւորիչ հուր մը՝ ինչպէս  
երկրի թագուն հնոցը՝ որուն երեսը զարուններով կը ծածկուի:

Այլ, մայրենի՛ բարբառ, հայրենեաց ամէն նուիրական յուշար-  
ձաններու նման՝ զքեզ ալ այժմ աւերակ կը տեսնեմ:

Պոլիս և Կովկաս՝ Հայ մտաւորականութեան զոյգ կեդրոններ՝ գերիշխանութեան մրցանքը կը մղեն. Իւրաքանչիւրն իրեն կը պահէ օրէնսդրի գերը, իրեն ձգելու շրջակայքը, իրեն վրայ ձեւելու անտաշ մասունքը:

Ամէ՛ն որ իր լեզուին ցտեղծողը կը հանդիսանայ, և եթէ Հայկ' Բարեւոնէ խուսափած՝ քսաներորդ դարուն մասէն Հայաստան՝ հիասթափ պիտի ըլլար՝ Բարեւոնը հոն գտնելով:

Հայ աշխարհիկ լեզուն կը փնտռէ ինքնամիտփումը, խառնագգեստ լեզուն՝ իր բիւրեղացումը. կեդրոնաձիգ ոյժ մը կը մղէ զայն դէպ ի կիրթ ճաշակ. գաւառացի ու մայրաքաղաքացի բարբառներ՝ համաչափ քայլով ու փայլով կը զիմեն դէպ ի հասարակաց բարբառ, ինչպէս միանալու գացող գետի նոյն ճիւղակներ:

Բայց ճանապարհը օձաձև կ'երկարի և հանդիպման կէտը կը խուսափէ միշտ՝ ինչպէս երկնային ուղւոյն վրայ՝ ուր արևն և լուսինը իրարու կը հետապնդեն: Ազգային մատենագիրներ՝ միութիւն կը քարոզեն անմիաբան լեզուով: Լեզուի հասարակաց օրինազիրը մը ի զուր կ'անձկայ լոյսը վայելել:

Այս դրութեան մէջ էին մեր նախնիք նաև Ե. դարուն՝ երբ Ս. Մեսրոպ երեցաւ: Ամէն գաւառ իր բարբառն ունէր տեղական գահու մը և տեղական պատմութեան մը հետ: Ինչ ոյժ այն ամէնը նուաճեց և լեզուի մէջ կանգնեց կեդրոնական իշխանութիւն՝ համապատասխան աւարատեան թագաւորութեան: Քսաներորդ դարու հայ լեզուին կացութիւնը՝ թարգմանչաց դարու փառքը կը պանծացնէ, և արդի անմիաբանութիւնն և խեղճութիւնը՝ անոր մեծութիւնը կը ցայտեցնեն:

Վէր ելլենք տասնհինգ դարեր. երէկուան անցեալը՝ այսօրուան երազ. այսօրուան հսկայ պատկերը՝ երէկուան իրականութիւն: Շրջան մը՝ ուր մեր ճշմարիտ օրէնսդիրներն ապրեցան՝ մեր մատենագրութեան ոսկեղինիկ փարթամ շարքը կը կազմէ. հոն Հայ Ազգին հանճարը՝ դարաւոր ժանգը մերկացաւ. հոն Ս. Սահակ և Ս. Մեսրոպ երկնքէն հեղեղուած լոյսին տակ՝ հայ լեզուին մարմին կը զգեցնեն հայրենի դրախտին մէջ. հոն՝ անոնք արևներ են արբանեակներու լուսաւոր երամին մէջ. քաղաքակիրթ աշխարհի մեծագոյն հանճարներուն՝ հայկական տարագի ոսկեհուռ շրջութիւնը կը հագուեցնեն: Հիմ կը դնեն անոնք դարաւոր կոթողի մը:

Ե. դար, ոսկեղէն բովն է մեր ազգին, ուր ամէն նիւթ մխրճուած կը զգենու չքնաղ աստղի մը փայլը, շքեղ մարմին մը, անմահ մարմիններուն պէս անխոց և թափանցիկ:

Այդ լեզուն ողիմբիական բմբիշը կը թուի որ մրցանք կը յայտարարէ բնութեան սրարշաւ պատկերներուն, բնութեան երևոյթներուն հետ. հողմին հետ կը մոնչէ, զեփիւրին անոյշ շունչն ունի, ամպերուն հետ կ'որոտայ, թռչնիկին հետ կը դայլայլէ և առաւօտեան խունկերուն հետ աղօթք մը կը դառնայ: Գրական աշխարհարարը՝ արծաթեայ դէմքով

լուսին մ'է գաւառային բարբառներու բոյլերուն մէջ: Բայց իր լոյսը  
ինքնարուխ չէ, այլ փոխ առնուած Ռսկեղարու լեզուի արևէն, և անոր  
շունչէն զլիուած՝ շուտով պիտի խաւարի:

Հայկայ որդիք, նախնեաց արիւնք մեր երակներուն մէջ ըլլայ,  
անոնց շունչը մեր կուրծքին տակ, անոնց բարբառը մեր շրթունքին  
վրայ, և մեծագոյն ներքողը՝ զոր կրնայ մեր լեզուն հնչեցնել՝ պար-  
տական ենք անոնց՝ որ նոյն իսկ այդ լեզուն ստեղծեցին:

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ